



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ  
ՎՆԴՅԱՆՈՒՐ ՅՈՂՈՎՈՅ  
ՄԻՍՏԱՆԱԿԱՆ ՌԻՏԻՆ  
ԱՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ  
Ի Ս. ԵՐՈՒՍԱԴԵՄ



ՀՐԱՄԱՆԱԻ  
ՊԱՏՐԻԱՐԳԻ ՄՐԲՅ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ  
Տ. ԵՍԱՅԵԱՅ  
ՄՐԲ ԿՁԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ  
ՏԳԱԳՐԵԱԼ  
Ի ՎԱՆՍ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ  
ՅԵՐՈՒՍԱԴԵՄ

1881

22 NOV 2017

*Handwritten marks*


**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ**

**ՄԻԱԲԱՆՍԱԿԱՆ ՈՒԻՏԻՆ**

**ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՅ**

**Ի Ս . ԵՐՈՒՍԱԴԷՄ**



**ԵՐԱԳՐԵԱԼ**

**Ի ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՅԱԿՈՎԲԵԱՆ**



**ԸՆԿԱԼԵԱԼ ԵՒ ՎԱԻԵՐՑԵԱԼ**

**Ի ՄԻԱԲԱՆՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ**

**ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՅ**

**Ի Ս . ԵՐՈՒՍԱԴԷՄ**

**1881**

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ ՈՒԽՏԻՆ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՅ



ԳԼՈՒԽ Ա.



ԲՅՅՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԵՒ

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԳԻՒԱՆԻ



ՅՕԳ. 1°. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ տարեկան շըրջանը մայիս 1էն կըսկսի եւ ապրիլի վերջը կ'աւարտի :

Ս. Աթոռոյս Պատրիարք Ամենապատիւ Սրբազանը՝ իբրեւ Նախագահ՝ Միաբանական Ընդհանուր ժողովոյ շըջանը կը բանայ մայիսի առաջին շաբթուն մէջ մասնաւոր ճառով մը , զոր Տնօրէն Խորհրդոյ Խորհրդակցութեամբ կը պատրաստէ :



1-311399

Բացման ճառով ընդհանուր տեսութիւն մը կ'ընէ Միաբանական գործոց նախընթաց տարւոյն վիճակին վրայ եւ Ընդհ. Ժողովոյ ուշադրութեանը կը յանձնարարէ ատենական նոր շջանին մէջ լուծելի գլխաւոր խնդիրները :

Ատենական շջանի վերջերք՝ ըստ կանոնի՝ Տն. Խորհրդոց համարատուութեան Տեղեկադիրը և նոյն տարւոյ հաշիւները կը բրննուին և յաջորդ տարւոյ Ելբարդոյը կը հաստատուի եւ կը վաւերանայ և սոյն գործողութեամբք Ընդհ. Ժողովը կը փակուի եւ Գիւանի պաշտօնը կ'աւարտի, եթէ իւր պաշտօնավարութեան երկու տարին լրացած ըլլայ :

307. 2°. Բացման ճառէն անմիջապէս յետոյ, եթէ Գիւանի վերանորոգու մը նոյն տարին հանդիպի, Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ Ժաղովկաններէն երեցագոյն մէկը տաժամանակեաց Ատենապետ բաղմիլ եւ կրտսերագոյն մը՝ Ատենադպրութեան պաշտօն վարել :

Այս տաժամանակեաց Գիւանին գործն է Միաբանական Ընդհ. Ժողովոյ Գիւանին կազմութիւնը :

307. 3°. Ընդհ. Ժողովոյ Գիւանը մէկ Ա.

տենապետէ, մէկ Փոխ-Ատենապետէ (1), մէկ Ատենադպրէ և մէկ Փոխ-Ատենադպրէ կը բաղկանայ, որք երկու շջանի համար կ'ընտրուին և անմիջապէս վերընտրելի են :

307. 4°. Ատենապետ և Ատենադպիր առանձինն կ'ընտրուին միանուն քուէով եւ բացարձակ առաւելութեամբ քուէից : Իսկ երկուքին ալ փոխանորդները՝ թէ և դարձեալ առանձինն և միանուն քուէով, բայց համեմատական առաւելութեամբ կրնան ընդունուիլ :

Քուէից հաւասարութիւն պատահած ատեն վիճակ կը ձգուի :

Եթէ Գիւանին մէջ հրաժարում պատահի, նոր ընտրութիւն կ'ըլլայ՝ փոխանորդն իսկական ըլլալով եւ տեղը նոր փոխանորդ մը ընտրուելով :

307. 5°. Ատենադրութեանց տոմարէն զատ Գիւանն ունի երկու տոմար՝ ինքրոց կարգի տոմար եւ ներկայութեան տոմար, զորս Ատենադպիրը կը պատրաստէ աջակցութեամբ Փոխ-Ատենադպրին :

(1) Փոխ-Ատենապետը Գիւանը չը բաղմիր, այլ միայն Ատենապետի բացակայութեան ատեն նորա կը փոխանորդէ :

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

307. 6°. Միաբանական Ընդհ. Ժողովը կը գումարուի 'ի Պատրիարքարան ,

Ա. Կանոնադրութիւնս ամէն ամսագլուխ՝ առաջին երկուշաբթի օրը ժամը 12 ին՝ ցորչափ որ խնդիր կայ իւր օրակարգին մէջ :

Բ. Պապահայէս , երբ Պատրիարքը , կամ Տն . Խորհուրդը մասնաւոր խնդրոյ մը համար հարկ տեսնեն և կամ Ընդհ. Ժողովը Ս. Երուսաղէմի մէջ գտնուող անդամոց մէկ եւրորդ մասն՝ բացորոշ խնդրոյ մը համար ըւտորագրեալ խնդրագրով հայցեն անոր գումարումը :

Պատրիարքը , կամ Ս. Աթոռոյ պարագ ժամանակ՝ Տեղակալը , և Պատրիարքի ամբաստանութեան ժամանակ՝ Պատրիարքական փոխանորդը կը հրաւիրէ զանդամն 'ի Ժողով , ամէն անգամ՝ օրակարգի խնդիրը գէթ 12 ժամ առաջ գրով ծանուցանելով ամէն մէկուն :

Երբ օրակարգն սպառի , նիստերը կը դադրին . բայց Ժողովը բաց կը համարուի , ըստ առաջին յօդուածի կանոնադրութեան :

307. 7°. Անձնիւր Ժողովական՝ Ժողովարանէն ներս մտած ատեն՝ ներկայութեան տոմարին մէջ իւր ստորագրութիւնը պէտք է դնէ իւր անուան առջեւ :

Ատեանը կը բացուի ճիշդ որոշեալ ժամուն Տէրունական աղօթքով և նախնեթաց առնադրութիւնն ընդունելութեան կը դրուի 'ի ներկայութեան որևէ թուոյ անդամոց : Ներկայ անգամք զիտողութիւննին կ'ընեն միայն Խմբագրութեան նկատմամբ . ետքէն եկողները , կամ հետեւեալ նստերուն մէջ ներկայ եղողներն իրաւունք չունին ո՛չ ինչ սրբագրել տալու և ո՛չ բողբբելու :

307. 8°. Ատենապետը կը բանայ և կը փակէ ատեանը :

Ատենապետին պաշտօնն է վիճաբանութիւններն ուղղել , ատենաբանից կարգով խօսք տալ , կանոնադրութեան պահպանութեանը հսկել , Ժողովն ըստ կանոնի ղեկավարել և բարեկարգութիւնը պահել :

Ատենապետին բացակայութեան ատեն՝ Փոխ-Ատենապետին կը մնայ այս պաշտօնը (1) :

(1) Եթէ Ատենապետը այն . կանոնադրութեան որևէ ցէյ յօդուածոյն հակառակ վարուի , որևէ Ժողովական իրաւունք ունի բողբբելու յառաջ բերելով նոյն յօդուածը :

307. 9°. Ատենադպրին պաշտօնն է կոչ նագիրերը պատրաստել և նախագահին ըստ տրագրութեամբ ժամանակին ժողովակաւ նաց զրկել, նստի մը ատենագրութիւնն ան փոփ և ըստ կարի ճիշդ խմբագրել, օրինակելով միանգամայն նոյն նստին մէջ ներկա յացուած գրութիւնները և խնդրոց կարգին ու ներկայութեան տոմարներու կանոնաւորութեանը հսկել. իսկ Փոխ-Ատենագրպին պաշտօնն է Ատենադպրին աշխատութեանց օժակցիլ և նորա բացակայութեանը ատեն՝ նոյն պաշտօնը վարել :

307. 10°. Ատենագրութեան ընթերցումը յատենի կ'ըլլայ և Ատենապետ ու Ատենագրիր՝ յետ ընդունելութեան կ'ըստորագրեն :

Ատենագրութիւնն ուրիշ բան չ'է, բայց եթէ նստի մը մէջ անցածին ըստ կարի ճիշդ և հաւատարիմ պատկերը : Գիտողութիւնը անոր անձիշդ երեւցած կէտերուն վրայ միայն կրնան ըլլալ, որք յաջորդ նստին մէջ ընթեռնել ատենագրութեան սկիզբն ան :

Այս պարագայիս մէջ եթէ խնդիրը ծանր կերպարանք առնու, Ատենապետը Փոխ-Ատենապետին կը թողու Ս.Թուրք և Ժողովականաց կարգը կ'անցնի՝ զինքն արգարացնելու համար :

պատճառ կը նշանակուին : Գիտողութեան պատրուակով անցեալէն թել մը բռնել եւ նոր խնդիր հանելը՝ խնդիրէն շեղիլ է և ան ներելի :

Գիտողութեանց կը պատասխանէ խմբագիր Ատենագրիրը, եթէ հարկ կայ պատասխանելու, բայց թէ դիտող և թէ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ :

Ատենագրութեան ընդունելութիւնը ձեռամբարձով կ'ըլլայ առանց վիճաբանութեան :

307. 11°. Օրակարգին անցնելէն առաջ Ատենապետը Ժողովին կը հաղորդէ անոր վերաբերեալ թուղթերը և Ժողովը՝ Ատենապետին առաջարկութեան վրայ յղումները կ'արտասանէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան :

Ժողովն մատուցեալ որևէ թուղթ Ս. Նախագահին կ'ուղղուի, որ ժամ առաջ Ընդհ. Ժողովոյ Գլխանին կ'աւանդէ. միայն ընդդէմ Պատրիարքին ամբաստանագիրն ուղղակի Ատենապետին կ'ուղղուի :

Ժողովն արտասանած յղումներն առ Վարչութիւն Ս. Աթոռոյ կամ առ Մասնա-Ժողովս, նոյնպէս ալ Ընդհ. Ժողովէն առ Ազգ. Երեսփոխանական Ժողովն մատուցեալ

որևէ թուղթ՝ կրստորագրէ Ս. Նախագահին հետ նաեւ Ատենապետն ընդհ. Ժուզովոյ :

Բայց երբ յղումն առ Նախագահն է, միայն ընդհ. Ժողովոյ Ղիւանը կրստորագրէ (Տ. Յօդ. 98° և 99° Կանոնի Միաբանական Ուխտին :

80Գ. 12°. Ոչ մէկ Ժողովական առանց Ատենապետէն խօսք խնդրելու եւ առնելու՝ կրաւունք չ'ունի խօսիլ :

Նախագահ Սրբազանը՝ երբ խնդրէ՝ խօսքն կրն է :

Ատենաբանը պարտի խնդիրէն չը շեղիլ :

Ատենապետը, երբ իբր անգամ խօսիլ ուղէ, Փոխ-Ատենապետին կը թողու կանխաւ Աթոռը, ինքն ալ իւր կարգին խօսք կը խնդրէ եւ նոյն խնդրոյն համար այլ եւս Ատենապետ չը բազմիր :

80Գ. 13°. Միեւնոյն խնդրոյն վրայ երեք անգամէն աւելի չը խօսուիր եւ խնդրողին Ատենապետը չը կրնար ներել առանց Ժուզովին հաճութեան. ՚ի բայ առեալ են առաջարկութեան մը հեղինակն ու տեղեկաբերը :

80Գ. 14°. Անձնական դէպքի մը, կամ կանոնագրական դիտողութեան մը համար

խօսք ուղղին՝ խօսք չը ղլացուիր (1) :

80Գ. 15°. Արգիլեալ են ամենայն ընդմիջում, աղմկայոյղ ցոյցեր և բեմական լեզուի անվայել բառեր և բացազանչութիւններ :

80Գ. 16°. Եթէ նիստը աղմկալից ըլլայ և Ատենապետը, կամ Նախագահը չը կրնան ղայն հանդարտեցնել, Ատենապետը կ'ազդարարէ, որ նիստը վերջնելու պիտի պարտաւորի :

Երկրորդ ապարդիւն ազդէն ետքը՝ նիստը կը վերնայ՝ յաջորդ օրը գումարեւու պայմանաւ :

80Գ. 17°. Ատենանը փակ յայտարարելէն առաջ Ատենապետը կը կարգադրէ՝ Ժողովին խորհուրդն առնելով, յաջորդ նստին օրն ու օրակարգը, որ ատենագրութեան մէջ կը նշանակուի :

(1) Զորքինակ խօսքի առաջնութեան համար, քուէի սխալ մը ուղղելու համար, անընդունելի բառի մը կամ թիւր մեկնուած իմաստի մը սրբագրութեան համար, և այլն : Այն պարագայիս մէջ եթէ պատասխանելու տեղի կայ, ում որ անկ է՝ նա միայն կը պատասխանէ, բայց թէ բողոքող և թէ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ :



ԳԼՈՒԽ Գ.

ՔՈՒԷՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՈՇՈՒՄ

307. 18°. Նախալձիւռ միշտ կրնայ առաջարկուիլ (1) :

307. 19°. Վիճաբանութիւնն աւարտեալ է, երբ խօսից կարգն սպառի եւ ատենաբանը կանոնադրութեան ներածին չափ խօսած ըլլան : Սակայն եթէ վիճաբանութեան ընթացքին մէջ ժողովականներէն ոմանք վիճաբանութեան աւարտումը պահանջեն, Ատենապետը՝ մնայեալ ատենաբանից անուն,

(1) Նախալձիւռ կամ նախախաբէ ձէռ կը կոչուի՝ խնդրոց մը որոշման տեղն ունենալը կամ մանաւանդ չ'ունենալը յայտնելը :

Ժողովը ժամափաճառ չ'ընելու համար նախալձիւռ կ'առաջարկուի, զորօրինակ կրօնական և քաղաքական խնդրոց մէջ ձեռնհասութեան համար, կանոնադրական սկզբան մը համար, արդէն որոշեալ կէտի մը համար և կամ երբ վիճելի կեանք գլխաւոր խնդրոց մը հետ այն աստիճան կատակցութիւն մը ունի, որ մէկը չըլլածուիլ առանց միւսը յուզելու եւ այն միւսը՝ գարու է օր մը իւր կարգին ծողովն զբաղելու. վերջապէս երբ որեւիցէ անտեղութիւն մը կայ խնդիրը վիճաբանութեան մէջ ձգելու մասին, զոր պէտք է այդ վճիռն առաջարկողը բացատրէ, որում խօսքը միշտ կը արուի և թեր ու դէմ խօսողները լսուելէն յետոյ, իրն դիր մը կրնայ առանց քննութենէ անցնելու մերժուիլ կամ ետ ձգուիլ սոսկ նախակարգ վճռով :

ները յիշեցնելով՝ ժողովին կամքը կը հարցընէ. ժողովը կը պատասխանէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան :

307. 20°. Որոշման մասին՝ քուէի, և միջանկեալ խնդրոց համար, կամ վիճաբանեալ խնդրոց մը վրայ՝ անդամոց մէկուն կողմէն առաջարկեալ եւ ուրիշի մը կողմէն յայնպիսեալ մասնաւոր օրակարգի մը պահանջմունք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրոցն վերայ, որոց վիճաբանութիւնը կրնան ընդհատել, բայց ատենաբանին խօսքը՝ ո՛չ, եթէ խօսած ատեն տեղի ունենան այդ պահանջմունք :

307. 21°. Եթէ վիճաբանութեան փակման դէմ խօսք ուղուի՝ մէկ ատենաբանի միայն կը արուի :

307. 22°. Քարեփոխութիւնը նախադասութիւն ունին գլխաւոր խնդրոցն վրայ և անկէ առաջ քուէի կը գրուին՝ առաջարկութեանց կարգաւ :

307. 23°. Օրինակսն կամ կանոնական ծրարգիրք և առաջարկութիւնը յօդուած առ յօդուած քուէի կը գրուին : Ամբողջին վրայ քուէով կ'աւարտի միշտ որոշումը :

Ճղաւոր խնդիրք մասն առ մասն քուէի կը գրուին :

807. 24°. Ժողովն իւր որոշման ենթարկեալ ինդրոց վրայ վճիռ կ'ուտայ ձեռամբարձով կամ երւենխտով (1) :

807. 25°. Ձեռամբարձով որոշումը կը կատարուի՝ թեր ու դէմ կարծեաց կողմէն զատ զատ ձեռք վերցնելով (փորձ ու հակափորձ), զոր Գիւանին անդամները կը համրեն և կը հաստատեն :

Եթէ հաստատեն թէ տարակցոյ կայ՝ փորձը կը կրկնուի :

Ո՛չ որ կրնայ խօսք անունը քուէարկութեան միջոցին :

807. 26°. Ժողովին մէջ ընտրութիւնը գաղտնի քուէով կ'ըլլան եւ քուէհամարը չորս քննիչներու ձեռք կը կատարուի, որոնք վիճակով կը հանուին (2) :

Գաղտնի քուէարկութիւնը հետեւեալ կերպով կ'ըլլայ : Փոխ-Ատենադպիրն իւրա-

(1) Երւենխտ թէ ձեռամբարձ անխտը կրնայ գործածել Ատենապետը, բայց ընդհանրապէս ձեռամբարձի առաջին տարակուսելի փորձէն յետոյ՝ ուր ձեռքերը համրելու գծուարութիւն ծագած է, երկրորդ փորձը երւենխտով ընել աւելի որոշիչ համարուած է :

(2) Իւրաքանչիւր ժողովականի անունը՝ առանձինս փորրիկ թղթի մը վրայ սպուած եւ տփի մը մէջ դրուած է, որմէ Ատենապետը չորս թուղթ քաշելով՝ նշանակեալ անձինքը կը կոչէ :

քանչիւր անդամի կը բաժնէ քուէթուղթ մը, որոյ վրայ անդամք կը գրեն քուէնին կանխաւ սահմանուած (5 վայրկեան) պայմա նաժամու մէջ. Ատենադպիրը մի առ մի կը հրաւիրէ իւրաքանչիւր ժողովական, որ Գիււանին վրայ եղող քուէտփին մէջ իրեն քուէն ձգէ իւր ձեռք : Քուէարկութիւնն աւարտելէն ետքը՝ Ատենապետին հրաւիրմամբ Ատենադպիրը քննչաց հսկողութեան ներքեւ քուէհամարը կը կատարեն և Ատենապետն արդիւնքը կ'իմացնէ ժողովին :

Միանուն է քուէն, երբ մէկ քուէով մէկ անձն կ'ուզուի ընտրել եւ քուէթուղթը մէկ անուն պարունակելու է :

Բազմանուն է քուէն, երբ մէկ քուէով մէկէն աւելի անձինք կ'ուզուի ընտրել և քուէթուղթն այնքան անուն պարունակելու է, որքան անձինք որ կ'ուզուի ընտրել :

Բազմանուն քուէթուղթը՝ եթէ ուղղուած որքանութեանէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի են. բայց միայն առաջիններէն ուղղուած որքանութիւնը կ'առնուի և վերջի աւելորդը չը համրուի :

Քուէից հաւասարութիւն պատահած ա տեն՝ վիճակ կը ձգուի :

807. 27°. Քուէի մասնակցողաց բացար-

ձակ առանկելութեամբը կը գոյանայ ժողովին որոշումը , երբ Բայաթայի առանկելութիւն կը մնտուուի :

Նախագահ Սրբազանը քուէի մասնակցելը պարտաւորեալ չ'է և անուանական կոչում չ'ըլլար իրեն համար :

Ամէն քուէարկութեանց վերջը՝ փակեալ յայտարարելէն առաջ՝ Ատենապետը խորովին կողմէն կը հարցնէ Ս. Պատրիարքին թէ՛ քուէ ունի՞ : Իսկ եթէ քուէ համար ըլլալով թեր ու գեմ քուէից որքանութիւններն ի բարու հաւասար ըլլան , եթէ Ս. Պատրիարքը քուէ տուած է , այն քուէին կողմը կը հակի որոշումը , զոր Ս. Պատրիարքը պէտք է յայտարարէ . բայց ասիկայ ընտրական չափարկութեանց մէջ չը կրնար ըլլալ . անոր մէջ որոշումն ու որոշողը միշտին է և ոչ այլ որ : Եթէ չ'է արւած , այն ատեն Ատենապետը յանուն խորովին կը խնդրէ Նորին Սրբազնութեան քուէն , որ կ'որոշէ զորոշումը . բայց եթէ Ս. Պատրիարքը չ'ուզէ դարձեալ մասնակցիլ քուէարկութեան , խնդիրը կրկին քուէարկութեան կ'ենթարկուի :

Ս. Պատրիարքին բացակայութեանն ատեն՝ Ատենապետին կը մնայ այս իրաւունքը :

301. 28°. Ժողովին որոշմանց վաւերա-

կանութեանը համար՝ անդամոց մեծամասնութեան ներկայութիւնը հարկաւոր է :

Երկու աստիճան մեծամասնութիւն կ'ընդունուի . Օրինական և Իսկական :

Օրինական մեծամասնութիւնն է՝ Միաբանական Ընդհ . Ժողովոյ Բոլոր անդամոց որքանութեան կէսէն մէկ աւելին :

Իսկական մեծամասնութիւնն է՝ Ս. Երոսուշիմ գլխաւոր անդամոց որքանութեան կէսէն մէկ աւելին :

Այս երկու աստիճան մեծամասնութիւնը իրենց որոշող մասը կ'ամ ձայնն ունին , որ իւրաքանչիւրին համար իւր բացարձակ առաւելութիւնն է : Զորօրինակ 27 ին որոշող ձայնն է 14 , և 18 ինը՝ 10 :

Անդամոց ներկայութիւնը Գիւանը կը հաստատէ ներկայութեան տոմարէն եւ քուէարկութեան ատեն դարձեալ կըստուգէ թէ՛ ստորագրողը իսկապէս ներկայ է և թէ՛ նիստը լիովին բաւական է որոշման ձեռնարկելու : Եթէ նիստը լիովին բաւական չը գտնուի , կը վերնայ , յաջորդ օրը դուրսը պայմանաւ :

301. 29°. Օրինական մեծամասնութեան ներկայութիւն կը մնտուուի .

1° Պատրիարքական ընտրելեաց համար :



2° Լուսարարապետի ընտրութեան համարս  
 30ր. 30°. Իսկական մեծամասնութեան  
 ներկայութիւն կը փնտռուի ամէն ընտրու-  
 թեանց համար, բայց ՚ի Պատրիարքական  
 ընտրելեաց և Լուսարարապետի ընտրու-  
 թիւններէն, և այն ամէն խնդրոց համար,  
 որք վիճաբանութեամբ լուծելի են. ՚ի բաց  
 առեալ են ատենին սկիզբն ըլլալու ատե-  
 նագրութեան ընդունելութիւնը եւ այն  
 խնդիրներն ու կէտերը, որք ձեռամբարձով  
 առանց վիճաբանութեան սրտելի են, ինչ  
 պէս են հրաժարմանց ընդունելութիւն, ա-  
 ուջնութիւն կամ նախագասութիւն, յղում,  
 օրոճգում, վիճաբանութեան փակում եւ  
 ստիպողութեան նկատառում, կամ վերջա-  
 պէս ՚ի մի բան այն խնդիրները, որք սոսկ  
 ատենական գործողութիւնք են, կրնան ո-  
 ղոջուիլ ՚ի ներկայութեան որ և է թուոյ ան-  
 դամոյ :

ԳԼՈՒԽ Գ.

ԽՆԴՐՈՅ ԿԱՐԳ, ՕՐԱԿԱՐԳ ԵՒ ՍՏԻՊՈՂՈՒԹԻՒՆ

30ր. 31°. Ընդհ. Ժողովոյ բացումէն սկը-  
 սեալ՝ վիճաբանելի խնդրոց կարգը բնակաւ  
 նապէս կ'ուզայ եւ իրեն յատկացեալ սու-  
 մարին մէջ կը նշանակուի :

Դիւանին կազմութիւնը, եթէ վերանու-  
 բողումը նոյն տարին հանդիպի, Ժողովոյ ա-  
 ուջին նստին աշխատանքն է (Տ. Յօդ. 1°) :

Ասկէ յետոյ կ'ուզան նախագահական  
 ճառով յատկապէս յանձնարարեալ խնդիր-  
 ները, որք Տն. Խորհրդոյ կողմէն իբրեւ օրի-  
 նաց ծրագիր կամ առաջարկութիւն կրնե-  
 կայացուին եւ զորս Ատենապետը՝ առաջ-  
 նութեան կարգով խնդրոց տոմարին մէջ ան-  
 յընելու արտօնութիւն կ'ուտայ Ատենա-  
 գարին՝ Ժողովոյ հաւանութեամբ :

Ոչ որ կրնայ խնդրոց տոմարին մէջ խըն-  
 դիր աւելցնել կամ պակսեցնել առանց Ժո-  
 ղովոյ հաւանութեանը :

Ատենապետը խնդրոց տոմարին հետեւե-  
 լով կը կարգադրէ յաջորդ նստին օրակարգը  
 (Տ. Յօդ. 17°), որ մէկ նստի մէջ վիճաբա-  
 նելի կամ կարգը նոյն աւուր եկած խնդիր  
 բսել է, որ և կը կոչուի պարզ և անխառն օրա-  
 կարգ :

30ր. 32°. Բնաւ խնդիր մը չը կրնար պարզ  
 օրակարգին մէջ խառնուիլ, եթէ Ժողովը  
 ստիպողութիւնը նկատողութեան չ'առնու  
 և չ'ընդունի :

Ոչ մէկ օրակարգ կրնայ առաջարկուիլ՝  
 եթէ պատճառաբանեալ, խմբագրեալ եւ

Գիւանին աւանդեալ չ'ըլլայ, զոր Ատենա-  
պետը ժողովոյ կը կարգայ :

Պարզ և անխառն օրակարգը, եթէ պա-  
հանջուի, առաջնութիւն ունի միշտ :

30Գ. 33°. Եթէ պարզ ու անխառն օրա-  
կարգն 'ի բաց առնուի, ժողովը կ'որոշէ ձե-  
ռամբարձով առանց վիճաբանութեան թէ՛  
կ'ուղէ նկատողութեան առնել կամ մասնա-  
ժողովոյ մը յանձնել պատճառաբանեալ օ-  
րակարգին քննութիւնը :

30Գ. 34°. Օրինական խնդրոց կամ առա-  
ջարկութեան մը ներկայացման ատեն՝ ստի-  
պողութիւն կրնայ խնդրուիլ :

Կրնայ խնդրուիլ Տն. խորհրդոյ կողմէն, հե-  
ղինակին կողմէն, որևէ ժողովականի կողմէն :

30Գ. 35°. Ստիպողութիւն յայտարարել  
տարւ խնդրանքը պատճառաբանեալ պէտք  
է ըլլայ :

Ժողովն առանց վիճաբանութեան կ'որո-  
շէ՝ Ատենապետին հարցման վրայ թէ՛ տեղի  
կայ եւք տալ ստիպողութեան խնդրանքին :

30Գ. 36°. Եթէ ստիպողութիւն յայտարա-  
րուի, ժողովոյ հարցուելէն յետոյ՝ նախա-  
քննութեան համար մասնաժողովոյ մը կը  
յանձնուի և ըստ այնմ վիճաբանութեան օ-  
րը կ'որոշուի :

Մասնաժողովոյ տեղեկագրոյն վրայ ժո-  
ղովն անմիջապէս վիճաբանութիւնը կը բա-  
նայ :

ԳԼՈՒԽ Ե.

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ք

30Գ. 37°. Ժողովականի մը բրած սրևէ ա-  
ռաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գը-  
բաւոր պէտք է ըլլայ : Ստորագրեալ Գիւա-  
նին կ'աւանդուի, որ ատենական գործու-  
ղութեանց կարգը զայն կը հաղորդէ ժողո-  
վոյ, որ եթէ հարկ տեսնէ, նախաքննութեան  
կը յղէ մասնախմբի մը, զոր ժողովը կ'որոշէ  
Ատենապետին առաջարկութեան վրայ կամ  
վիճակաւ :

30Գ. 38°. Եթէ նախաքննիչ մասնախմբի  
տեղեկագրոյն եզրակացութիւնը պարզապէս  
մերժում՝ կամ օրաձգում ըլլայ, ժողովը  
կ'անցնի իւր օրակարգին . իսկ եթէ նկատա-  
ռում ըլլայ, նախ զայն կ'որոշէ ժողովը : Ե-  
թէ ընդունի, կ'անցնէ զայն խնդրոց տոմա-  
րին մեջ, ուր կըսպասէ իւր օրակարգին :

30Գ. 39°. Առաջարկութեան մը հեղինակը՝  
եթէ վիճաբանութիւնն անգամ բացուած  
ըլլայ, կրնայ զայն միշտ ետ առնել : Բայց

եթէ ուրիշ ժողովական մը զայն բռնէ , վի-  
ճաբանութիւնը կը շարունակուի :

307. 40°. Ժողովէն մերժեալ առաջարկու-  
թիւնը չ'են կրնար մէկ մ'ալ ներկայանալ  
երեք ամսէ առաջ :

307. 41°. Տն . Խորհրդոյ կողմէն ներկա  
յուած օրինական ծրագիր կամ առաջար-  
կութիւն՝ անդամոց մէկուն ձեռօք Բնդհ.  
Ժողովոյ Գիւանին կ'աւանդուի :

Այս ծրագիրք պատճառաբանեալ կ'ըլլան :  
Օրինական ծրագիրք կամ առաջարկու-  
թիւնք , եթէ ժողովը հարկ տեսնէ , մասնա-  
ժողովոյ մը կը յանձնուին՝ խնդիրն ուսում-  
նասիրելու և նախապատրաստական քննու-  
թիւն ընելու համար :

Այս մասնաժողովոյն տեղեկագիրը Բնդհ.  
Ժողովոյ Գիւանին կ'աւանդուի :

Ատենապետը կ'առաջարկէ եւ ժողովը  
կ'որոշէ վիճաբանութեան օրը :

307. 42°. Ոչ մի օրինական ծրագիր վերջ  
նական քուէի չ'դրուիր , եթէ երեք որս  
շումէ չ'անցնի :

Առաջին որոշումը յատկապէս ծրագրին  
ընդունելութեանը վրայ կ'ըլլայ : Ժողովոյ  
կը հարցուի թէ՛ կ'ուզէ երկրորդ որոշման  
անցնիլ :

Երկրորդ որոշումը կ'ըլլայ մէն մի յօ-  
դուած վիճաբանութեան և քուէի դնելով ,  
նաև անոնց վերաբերեալ բարեփոխութիւն  
ները , եթէ կան : Ժողովը կ'որոշէ թէ՛ կ'ու-  
զէ երրորդ որոշման անցնիլ :

Երրորդ որոշումէն յետոյ , որ ծրագրին  
բովանդակութեանը եւ մասնաւոր արամա-  
դրութեանց վրայ վիճաբանութեամբ կ'ըլ-  
լայ , վերջնական քուէի կը ձեռնարկուի , որ  
կը կնքէ որոշումը :

307. 43°. Բարեփոխութիւնք խմբագը-  
րեալ Ատենապետին կը արուին : Քուէի չ'են  
թարկուիր ոչ մէկ բարեփոխութիւն եթէ՛  
բացատրուելէն յետոյ՝ երկրորդող մը չ'ու-  
նենայ :

307. 44°. Երկրորդ որոշման միջոցին ա-  
ռաջարկեալ բարեփոխութիւնք՝ մասնաժո-  
ղովոյ յղել իրաւունք է՝ եթէ տեղեկաբերը  
խնդրէ :

Երկրորդ որոշման փակումէն յետոյ ներ-  
կայեալ նոր բարեփոխութիւն կամ յաւե-  
լուածական յօդուած՝ երրորդ որոշման բա-  
ցումէն առաջ հաղորդուած պէտք է ըլլայ  
մասնաժողովոյ :

307. 45°. Եռեակ քուէարկութեամբ բարդ  
որոշման տնօրէնութիւնը՝ ելմտացուցի խնդրոց

համար չ'է . ասոնք միակ քուէարկութեամբ  
և պարզ որոշման եղանակաւ կը անօրինուին ,  
սպ կանոնադրական կէտերու համար է :

807 . 46° . Եթէ երեք որոշմանց մէկուն  
մէջ մերժուի օրինական ծրագիր մը , վեց  
ամսէ առաջ չը կրնար դարձեալ երեւիլ ժու  
ղովցն օրակարգին մէջ :

807 . 47° . Ժողովոյ որոշմանց արդիւնքը  
Ատենապետը կը հռչակէ սա բառերով ,

“ Ընդհ . Ժողովն ընդունեց ”

կամ “ Ընդհ . Ժողովը չ'ընդունեց ” :

807 . 48° . Ընդհ . Ժողովոյ վերջնական վը  
ճիւղը նոյն ժամէն գործադրելի է :

Ատենապետը՝ Ժողովոյ կամքն առնելէն  
յետոյ՝ յանուն Ժողովոյ ստորագրելով կը  
հրամանէ վճռագիրը , նստին օրէն թուակա  
նեալ :

Վճռագիրն Ատենապետին ձեռօք Ամեն .  
Ս . Պատրիարքին կը տրուի , զոր ինքն ալ  
ստորագրելով՝ Նախագահական հրաման  
մամբ գործադրութիւնը կ'ապահովէ ( Տ .  
Յօդ . 11° ) :

Օրինակը Պատրիարքարանի Դիւանի մէջ  
արձանագրուելով՝ վճռագիրը կը սահուի  
Պատրիարքական Դիւանատան Գրագարանին  
մէջ :

807 . 49° . Եթէ հաստատուած օրինաց  
մէջ կանոնադրական այնպիսի կէտեր կան ,  
որ Ազգային Ժողովոյ վաւերացմանը կը կա  
րօտին , Ամեն . Ս . Պատրիարքը կը փութաց  
ղանձնք զրկել 'ի Պօլիս 'ի վաւերացումն , և  
եթէ ստիպողաբար գործադրութիւնը կա  
րելոր դատուի Ժողովով , Ժողովն իւր պա  
տասխանատուութեան ներքեւ կը հրամայէ  
նաեւ զայն :

807 . 50° . Ժողովն իւր որոշումէն ետ չը  
կրնար դառնալ կամ զայն փոխել , եթէ Մե  
տքանական Վարչութեան կողմէն՝ որդեալ  
ինչոյն գործադրութեան անտեղութիւն  
պատճառելով՝ ստիպողաբար փոփոխութիւն  
չը խնդրուի , որոշումէն գտնէ երեք կամ վեց  
ամիս յետոյ :

Եթէ ստիպողութիւնը մերժուի , արդէն  
որոշեալ խնդիրը մէկ մ'ալ չը կրնար ներկա  
յուիլ նոյն ատենական շրջանին մէջ :

ԳԼՈՒԽ Զ .

ԲԵՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՀ . ԺՈՂՈՎՈՅ

807 . 51° . Ժողովոյ ուղղակի եւ ներքին  
յարաբերութիւնները Միաբանական Վար

չութեան հետ են, որոյ անդամք իրենց հա-  
մարատուութեան խնդրոյն մէջ ձայն ունին,  
բայց քուէ ս'չ:

Ընդհ. Ժողովոյ Գիւանն առանց թղթի  
գործ ս'չ կ'ընդունի իւր Վարչութենէն և ս'չ  
կը յղէ իւր Վարչութեան (1):

ՅՈՒ. 52°. Տն. Խորհուրդը պատասխա-  
նատու է առ Ընդհ. Ժողով՝ անձնիւր անդամ  
առանկին իւր պաշտօնին եւ բոլոր անգամք  
հասարակէս խորհրդոյ գործառնութեանց նը-  
կատմամբ՝ ըստ Կանոնի Միաբանական Ռեւ-  
տին:

Այս պատասխանատուութիւնը կը կատա-  
րուի Ընդհ. Ժողովոյ մէջ կանոնաւորապէս  
տեղի ունեցած հարցմանց պատասխանելով  
և տարեկան համարատուութեամբ Խորհրդ

(1) Տն. Խորհուրդը չը կրնար և իրաւունք չ'ունի խնդիր  
յղել Ժողովն 'ի քննութիւն և տարտամ կերպով կարծիք  
հարցնել. քանզի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ և  
Ժողովը տեղեկութիւն տալու տեղ չ'ունի և երմէ վըր պաշ-  
տնական մարմին չը կայ բայ 'ի Աղդ. Ժողովէն: Իւր քըն-  
նութեանց և վիճարանութեանց նպատակը՝ միայն վճռել մը  
հասնիլ է: Կրնն եկամ թուղթերը, որ իւր Գիւանին կա-  
ւանդուին, վճիռ կըստատեն և ս'չ տեղեկագիր:

Տն. Խորհրդոյ ընկերք խնդրանք մի է կամ առաջարկու-  
թիւն, որոյ համար ստիպողութիւն կրնայ խնդրել:

դոյ. որով Ընդհ. Ժողովոյ կը ներկայացնէ  
տեւական և ընդհանուր վերակերպութիւն  
ները, եղծմանց և անկանոնութեանց առա-  
ջնն տուներու համար նոր հաստատուած օ-  
րէկըն ու կանոնները, Միաբանական գործոց  
իւրաքանչիւր ճիւղին իւր մասին մէջ սրչափ  
յառաջագիմած և ս'ր ստաիճան բարգաւա-  
ճեալ ըլլալը. վերջապէս որեւէ պաշտօնէի  
պարտականութիւնը կատարած կամ ս'ր առ-  
տիճան կատարել կրցածը:

Եթէ այդ համարատուութիւնը և Միա-  
բանութեան տարեկան ելմտացոյցը ժամա-  
նակին Ընդհ. Ժողովոյ Գիւանին չ'աւան-  
դուին, պատասխանատու կը մնայ Միաբա-  
նական Վարչութիւնը, որոյ այս մասին հար-  
ցում կ'ուզուի Ընդհ. Ժողովոյ Գիւանէն:

ՅՈՒ. 53°. Վարչական պաշտօնէից տարե-  
կան համարատուութիւնը՝ ըստ Կանոնի՝ տա-  
րւոյն վերջերը Ընդհ. Ժողովոյ Գիւանին կ'ա-  
ւանդուի: Ժողովը, եթէ հարկ տեսնէ, զայն  
նախաքննիչ մասնաժողովոյ մը կը յանձնէ,  
որ իւր քննութեանց արդիւնքը տեղեկագը-  
րով մը Ժողովոյ կը մատուցանէ տեղեկա-  
բերի մը միջոցաւ:

Ատենապետը կ'առաջարկէ և և Ժողովը  
կ'որոշէ վիճարանութեան օրը:



307. 54°. Համարատուութեան քննութեան արդեամբ ժողովը կամ կը գտի կամ կը պարսաւէ Տն. Խորհրդոյ ընթացքը և իւր դատաւճիւր գաղտնի քուէով կը յայտնէ (1):

Համարատուութեանց չ'ընդունելութիւնըն անվստահութիւն կ'ենթադրէ ժողովոյ կողմէն համարատու անձին վրայ, որ պարտաւորեալ կը գտնուի հրաժարելու:

307. 55°. Տնօրէն Խորհրդոյ անդամոց հրաժարականը Ս. Պատրիարքին կը արուի, որ անմիջապէս ժողովը կը հաղորդէ: Սոյն հրաժարականը ժողովը, եթէ հարկ տեսնէ, մասնաժողովոյ մը կը յանձնէ և նորա եզրակացութեանը վրայ ձեռամբարձով առանց վիճաբանութեան՝ կամ կ'ընդունի կամ կը մերժէ:

307. 56°. Ար և է պարագայի մէջ՝ երբ Տն. Խորհրդոյ անդամներէն որեւիցէ մէկը ժողովոյ կողմէն անվստահութեան ցոյց կամ կասկած նշմարէ, միշտ իրաւունք ունի վստահութեան քուէ պահանջելու:

(1) Այս քուէարկութիւնը՝ ընտրութեանց համար եղածին նման կ'ըլլայ, միայն թէ՛ քուէթղթոց վրայ փոխանակ առան գրելու, պէտք է այ՛ր կամ ո՛ւր գրել, որ ընդունելութիւն կամ չ'ընդունելութիւն կը նշանակէ:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վիճաբանութեան թէ՛ այդ քուէին հարկ կայ: Այդ քուէն յաջորդ նստին կը մնայ, որոյ արդիւնքը Տն. Խորհրդոյ միւս անդամոց չ'ը գալչիր:

307. 57°. Ժողովական մը ամէն ատեն կրնայ հարցում կամ հարցապնդում (1) ուղղել Տն. Խորհրդոյ որեւէ մէկ անդամին, կամ Ս. Պատրիարքին, բայց գրաւոր պէտք է տայ իւր այդ խնդրանքն Ատենապետին: Այդ խնդրանքը կը բացատրէ համառօտիւ հարցման նիւթը և կ'ըսէ սւմ ուղղեալ ըլլալը, Ատենապետը կ'ընթեանու զայն ժողովոյ:

Ժողովականէ առ ժողովական հարցում կամ հարցապնդում արգելեալ է:

(1) Հարցումը՝ խնդրոյ մը վիճակն ստուգելու համար կ'ըլլայ, և Պապականի տրուելով կը վերջանայ. վիճաբանութեան և քուէարկութեան հարչ չ'ը կայ. վճարէ՞ր մը է, որ կը գոցուի:

Իսկ Հարցապնդումը՝ խնդրոյ մը առթիւ պաշտօնէութիւնը քննադատել կ'ենթադրէ, և պատասխանը տեսակ մը բացատրութիւն է, որ կը տրուի վերբերական պաշտօնէին կողմէն՝ անոր վրայ վիճաբանութիւն կ'ըլլայ և պատճառաբանեալ օրակարգի, կամ պարզ և անխառն օրակարգի կամ ուրիշ մէկ առաջարկութեան կամ վստահութեան կամ անվստահութեան քուէարկութեամբ կը վերջանայ: Ասիկա տեսակ մը համարատուութիւն է, որ ձառամբ կը կատարուի ընթացք տարւոյ, և դատաստան մը, ուր պաշտօնէայն կը դատաստարտուի կամ ՚ի չ'ըմբողջ կ'ենէն:

807. 58°. Տն. Խորհրդայ անդամներէն այն, որում անկ է պատասխանել, հարցման կամ հարցապնդման պատասխանելն հնարաւոր կամ ոչ ըլլալուն և երբ կարենալուն վրայ իւր կարծիքը տալէն յետոյ, ժողովը կը վիճուէ ձեռամբարձով՝ առանց վիճաբանութեան՝ թէ երբ կ'ուզէ լսել այդ հարցումը կամ հարցապնդումը :

Հարցումը կամ հարցապնդումը լմննալէն և միջադէպը գոցուելէն յետոյ, ժողովը կը դառնայ իւր օրակարգին :

807. 59°. Ս. Պատրիարքին համար անվտանգութեան քուէ չ'առաջարկուիր, և ոչ իսկ ինք կրնայ վտանգութեան քուէ պահանջել. բայց կրնայ ամբաստանուիլ ժողովականայ կողմէն Կանոնադրութեան հակառակ ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար :

Երբ կանոնաւոր (Տ. 307. 32°) ամբաստանագիր մը աւանդուի Ընդհ. ժողովոյ Գիւանին, Ատենապետը դայն կը յայտնէ ժողովոյ եւ անոր կարծիքն առանց վիճաբանութեան առնելէն յետոյ՝ նախաքննիչ մասնաժողովոյ մը կը յանձնէ, որոյ անդամները գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրուին՝ ամբաստանող խմբէն դուրս գտնուող անդամներէն :

Այս մասնաժողովն իւր տեղեկագրով կամ պարզապէս մերժման կ'եզրակայէ կամ նկատառման :

Տեղեկագրին եզրակայութեան վրայ ժողովը կ'արտասանէ իւր վճիռը ձեռամբարձով՝ առանց վիճաբանութեան, և ըստ այնմ կամ կ'անցնի իւր օրակարգին՝ եթէ մերժումն արտասանէ, կամ ելք կ'ուտայ ամբաստանութեան՝ եթէ նկատառում արտասանէ :

Այս վերջին պարագային մէջ՝ քննիչ մասնաժողով մը կ'ընտրուի դարձեալ ըստ վերնոյն՝ գաղտնի քուէով և ամբաստանողներէն դուրս գտնուող անդամներէն՝ ամբաստանութիւնը քննելու համար :

Այս քննիչ մասնաժողովոյն տեղեկագիրը գալէն ետքը կը կարդայուի եւ դատական նստի օրը կը սահմանուի, և սոյն նիստը ըստ Կանոնի Պատրիարքական Փոխանորդը կը գումարէ (Տ. 307. 6°) : Սոյն նստին մէջ վիճաբանութիւն և քուէարկութիւն կ'ըլլայ եւ տեղեկագիր մը կը պատրաստուի Կ. Պօլսոյ զրկելու համար :

Իսկ եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատուի ժողովէն, այս որոշումը յանուն ժողովոյ՝ Գիւանը կը հաղորդէ Ս. Պատրիարքին

եւ յաջորդ նստին ամբաստանողը կը պարտաւորին ներում ինդրել Նորին Սրբազնութենէն , կամ պատիժ կրել ըստ որոշման Ժողովոյն :

307. 60°. Սոյն օրինակ կրնայ ամբաստանուիլ նաև Տն. Խորհրդոյ իւրաքանչիւր ձիւղ և Ընդհ. Ժողովը սոյն ճամբով կը դիմէ իւր դատավճռոյն , միայն թէ՛ այս պարագային մէջ զանց կ'առնուի նախաքննիչ մասնաժողովը :

Եթէ Տն. Խորհրդոյ սրեւէ մէկ ձիւղին դէմ եղած ամբաստանութիւնն իրաւացի դատուի Ժողովէն , պարտաւոր ձիւղն պաշտօնանկ կ'ըլլայ . իսկ ընդհակառակը՝ եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատուի Ժողովէն , անպարտ ձիւղին հաստատութիւնն կ'ամրապնդի , և ամբաստանողը կը պարտաւորին յաջորդ նստին ներումն ինդրել անպարտ ձիւղէն կամ պատիժ կրել ըստ որոշման Ժողովոյն :

307. 61°. Տն. Խորհրդոյ անդամք ալ կրնան ամբաստանել Ս. Պատրիարքը , բայց պէտք է նախ հրաժարին կամ դադրին պաշտօնէ . սակայն չ'են կրնար ամբաստանել , երբ արդէն Նորին Սրբազնութեանը կողմէն Խորհրդականաց փոփոխման մը առաջարկութիւն առանդուած է Ընդհ. Ժողովոյ Գիւանին :

307. 62°. Եթէ Ս. Պատրիարքը Տն. Խորհրդոյ մասնակի կամ ամբողջակի փոփոխումն առաջարկէ Ընդհ. Ժողովոյ , պատճառաբանեալ կ'ընէ այդ առաջարկութիւնը և Ժողովը մասնաժողովոյ մը նախաքննութեան կը յանձնէ և անոր տեղեկագրոյն եզրակացութեանը վրայ հարկ եղած տնօրէնութիւնը կ'ընէ :

ԳԼՈՒԽ Է .

ՊԱՏՃԱԿԱՆ ՏՐԱՄԱՐՈՒԹԻՒՆՔ

307. 63°. Ընդհ. Ժողովոյ կանոնադանց անդամոց տնօրինուելու բարեկարգական պատիժներն երեք աստիճան՝ և ասոնք են .

- Մեղմ՝ { 1° Ի կարգ կոչում :
- Խիստ՝ { 2° Յանդիմանութիւն .
- { 3° Պարսաւանօք յանդիմանութիւն :

Մեղմ պատիժն Ատենապետը կը տնօրինէ . խիստ պատիժները Ժողովը կ'արտասանէ :

307. 64°. Ի կարգ կը կոչուի այն ատենաբանը , որ կարգէն կը խտտորի , այն անդամն , որ 15° յօդուածին պատուիրանքը չը յարգելով կամ որևիցէ կերպով՝ բարեկարգութիւնը կը խանգարէ :

307. 65°. Ատենապետն ինքնին անկախ հեղինակութիւն ունի ՚ի կարգ կոչելու :

խօսքը կը շնորհուի այն ատենաբանին, որ  
ի կարգ կոչուելով կը հպատակի Ատենա-  
սլեատին հեղինակութեանը և կը խնդրէ զինքն  
արգարացնել :

Այն անդամն, որ խօսելու արտօնութիւն  
չ'առած զինքն ՚ի կարգ կոչել կուտայ, խօսք  
չ'ունի զինքն արգարացնելու համար եթէ  
Ատենապետը չը հաճի, այլ միայն ատենան  
վերջերը :

307. 66°. Երբ ատենաբան մը միեւնոյն  
նստին մէջ երկու անգամ ՚ի կարգ կոչուի,  
Ժողովն Ատենապետին առաջարկութեանը  
վրայ կրնայ արգելել զայն այնուհետև խօսքէ  
նայն նստին մէջ :

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց  
վիճաբանութեան :

307. 67°. Յանդիմանութիւն կ'արտասա-  
նուի այն անդամին դէմ,

1° Որ մէկ քանի անգամ ՚ի կարգ կոչուե-  
լէն ետքը չը դառնար ՚ի կարգ և ՚ի պարտա-  
կանութիւն :

2° Որ Ժողովը մէջ աղմկայոյզ տեսարան  
մը յարուցանելու նախաձեռնէ կամ օրէ-  
նըդրական աշխատանքէ հաւտքապէս ձե-  
ռնւպահութիւն թելադրէ :

3° Որ իւր պաշտօնակցաց մէկուն կամ

մէկ մասին դէմ նախատինք կամ գրգռիչ  
սպառնալիք ուղղէ :

307. 68°. Պարտաւանօք յանդիմանութիւն  
կ'արտասանուի այն անդամին դէմ,

1° Որ պարզ յանդիմանութեան դիմա-  
դարձութիւն ընէ :

2° Որ Ժողովն անարգէ, կամ անոր մէկ  
մասը, կամ Ատենապետը :

307. 69°. Պարտաւանօք յանդիմանութիւնը  
կը սարսաւորէ յանցաւոր անդամն՝ խօսոյն  
ատենանը թողուլ դուրս ելնել և այլ եւս  
չ'երեւիլ նոյն նստին մէջ :

Եթէ չ'ենէ, Նախագահը հրաման կ'ընէ :

307. 70°. Յանդիմանութիւնները թէ պարզ  
թէ պարտաւանօք՝ Ժողովը կ'արտասանէ ձե-  
ռամբարձով առանց վիճաբանութեան, Ա-  
տենապետին՝ յանուն կանոնադրութեան՝ ա-  
ռաջարկութեանը վրայ եւ Նախագահը կը  
գործադրէ :

Այն Ժողովականը, որոյ դէմ առաջար-  
կուի այս բարեկարգական պատիժներէն մէ-  
կը կամ միւսը, միշտ իրաւունք ունի իւր  
արգարացման համար խօսելու կամ յանուն  
իւր խօսեցնելու իւր պաշտօնակցաց մէկը :

Ժողովը արտասանած պատիժներն ա-  
տենադրութեանց մէջ կը նշանակուին :

ԳԼՈՒԽ Ը.

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆՅՔ

807. 71°. Բացակայութեան հզօր և բա-  
նաւոր պատճառներն են .

1° Հիւանդութիւն .

2° Տեսչութեամբ և ամսական պաշտօնաւ  
վարութեամբ 'ի Ս . Յարութիւն գտնուիլ (1) :

807. 72°. Ս . Նախագահին ներկայու-  
թիւնը միշտ կարեւոր է ժողովոյ շուքն ու  
պատկառանքն աւելցնելու համար և երբեմն  
անհրաժեշտ՝ ժողովոյ ներքին ասպհովու-  
թեանը համար :

Երբ բանաւոր պատճառով ստիպուի բա-  
ցակայութեան , իւր տեղ Փոխանորդը կը  
նախագահէ :

807. 73°. Ընդհ . ժողովոյ Գիւանի ան-  
դամոց ներկայութիւնը միշտ հարկաւոր է  
ատենանին բացման ճիշդ որոշեալ ժամունն ,

(1) Ստիպողական գործով բացակայ գտնուող ժողովա-  
կան մը պարտի կանխաւ գրով հաղորդել իւր բացակայու-  
թեան պատճառը . իսկ եթէ պաշտօնական յեղակարծ գոր-  
ծով մը բացակայ գտնուի , պարտի յմջորդ նստին գրաւոր  
բացատրութիւն տալ իւր բացակայութեան նկատմամբ :  
Այս տեսակ բացակայութեանց ընդունելութիւնը կամ մեր-  
ժուր՝ առանց վիճաբանութեան ձեռամբարձով կ'ըլլայ :

մանաւանդ Ատենապետինն ու Ատենադպ-  
րինն անհրաժեշտ է , մէկը՝ ատենանը բանա-  
լու , միւսը՝ ատենագրութեան վրայ դիտու-  
ղութեանց պատասխանելու համար :

Եթէ Ատենապետը հզօր պատճառով մը  
ստիպուի բացակայութեան , պարտաւոր է  
կանխաւ իմաց տալ Փոխ-Ատենապետին :

Նոյնը կը պարտաւորի ընել նաեւ Ատե-  
նադպիրը՝ Փոխ-Ատենադպրին :

Ժողովոյն արժանապատուութեան դպչող  
անտեղութիւն է Ընդ . ժողովոյ Գիւանի ան-  
դամոց բացակայութեան պատճառաւ՝ առ-  
օրեայ Գիւանով ատենան բանալու հարկա-  
դրուիլ (Տ . Յօդ . 2°) :

807. 74°. Եթէ ժողովական մը առանց  
բանաւոր պատճառի ատենական շրջանի մը  
մէջ երկու անգամ բացակայ ըլլալէն յետոյ ,  
երրորդ անգամ մ'ալ բացակայ գտնուի , իւր  
Միաբանական պարտուց դէմ մեղանշած կ'ըլ-  
լայ երեք անգամ և 'ի պատիժ իւր Միաբա-  
նական տարեկանին , մէկ երրորդ մասէն կը  
զրկուի . եթէ չորրորդ անգամ մ'ալ բացա-  
կայ գտնուի , նոյն տարեկանին մէկ երրորդ  
մասէն ալ կը զրկուի , և եթէ հինգերորդ ան-  
գամ մ'ալ բացակայ գտնուի , բոլոր տարե-  
կանէն կը զրկուի . իսկ եթէ վեցերորդ ան-

գամ մ'ալ բացակայ գտնուի, կ'ըլլայ վերջ նախն բացակայութիւն, զոր ժողովն Ատե նապետին՝ յանուն Կանոնադրութեան՝ առաջարկութեանը վրայ՝ ձեռամբարձով առանց վիճաբանութեան կը վճռէ, եւ նոյն պարտազանց անդամին պատիժը կ'որոշէ :

ԳԼՈՒԽ Թ.

Տ Ե Օ Ր Է Ն Խ Ո Ր Հ Ո Ի Բ Դ

80Ի. 75°. Ս. Աթոռոյս Տն. Խորհուրդը Ս. Պատրիարքի նախագահութեամբ հետեւեալներէն կը կազմուի.

- 1° Լուսարարապետ.
- 2° Պատրիարքական Փոխանորդ կամ Յարաբերութեանց Տեսուչ.
- 3° Ելեւմտից Տեսուչ.
- 4° Ուսումնապետ.
- 5° Տնտեսապետ.
- 6° Կալուածապետ :

Ատնիք բաց ՚ի Լուսարարապետէն, որ ցկեանս անփոփոխ է, երկու տարւոյ համար կ'ընտրուին և վերընտրելի են (Տ. 30դ. 52°) :

Այս պաշտօնեայնները՝ Միաբանական Ուխտին Կանոնը կարգացուելով միանուն քուէ-

ով զատ զատ կ'ընտրուին բացարձակ առաւելութեամբ քուէից :

Քուէից հաւասարութիւն պատահած ատեն վիճակ կը ձգուի :

Տն. Խորհուրդն ինքը կ'ընտրէ իւր Դէւանը և Ընդհ. ժողովը կը հաղորդէ :

ԳԼՈՒԽ Ժ.

Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Բ

80Ի. 76°. Ընդհ. ժողովն ըստ հարկին առժամանակեայ մասնաժողովներ կը կարգէ 3էն մինչեւ 7 անդամներէ բաղկացեալ, Կանոնադրութեան, Տն. Խորհրդոյ համարատուութեան, առաջարկութեան մը և այլ ինդրոց նախապատրաստական քննութեան համար, դատաստանի մը համար, և այլն :

80Ի. 77°. Որեւէ մասնաժողովը անդամք քուէից համեմատական առաւելութեամբ կ'ընտրուին :

Ընդհ. ժողովը Ստեճապետը չը կրնար որեւէ մասնաժողովը անդամ ընտրուիլ :

Մասնաժողովը անդամ մը՝ ուրիշ մասնաժողովը մ'ալ անդամ կրնայ ըլլալ :

80Ի. 78°. Իւրաքանչիւր մասնաժողով իւրը կը կարգէ իւր Ատեճապետն ու Ատեճա-

դպիրը և յանձնուած խնդիրը քննելէն յետոյ՝  
կ'որոշէ իւր տեղեկաբերը :

Մասնաժողովք տեղեկագրով մը և տեղե-  
կաբերի մը միջնորդութեամբ կը ներկայեն  
Ընդհ. Ժողովոյ իրենց աշխատութեան ար-  
դիւնքը , որ տեղեկագրոյն վերջը եզրակա-  
ցութեամբ կ'անսփոփի :

Մասնաժողովոյ մը պաշտօնը՝ իւր տեղե-  
կագրոյն հետ կ'աւարտի :

Սմեն տեղեկագիր , որ մասնաժողովոյ ան-  
դամոց ստորագրութիւնքը եւ գրութեան  
թուականը չը կրեր , անվաւեր եւ իբրեւ  
չ'եղեալ կը նկատուի Ժողովէն :

Եթէ մասնաժողովոյ անդամ մը համա-  
միտ չ'ըլլայ իւր ընկերներուն , դարձեալ  
պէտք է ստորագրէ տեղեկագիրը , իւր ըս-  
տորագրութեան ներքեւ աւելցնելով և Բայաթ-  
րելով իւր կարծիքը :

307. 79°. Երբ մասնաժողով մը առանց  
բանաւոր պատճառի՝ որոշեալ նստին իւր  
քննութեան արդիւնքը չը բերէ Ընդհ. Ժո-  
ղովոյ, անգամ մը ՚ի կանոնապահութիւն յոր-  
դորուելով եթէ դարձեալ անհոգ մնայ իւր  
պարտքը կատարելու , պարսաւանաց քուէ  
ընդունելով՝ կը լուծուի և տեղը յաջորդ մը  
կ'ընտրուի :

Մասնաժողովոյ մը գոնէ տեղեկաբերը  
պէտք է ներկայ գտնուի նստին :

307. 80°. Առաջարկութեան մը հեղինակն  
իրաւունք ունի ընթերակցելու խորհրդակից  
ձայնով նոյն առաջարկութիւնը քննող մաս-  
նաժողովոյ նստերուն :

Եթէ միւլնոյն առաջարկութեան քանի մը  
հեղինակներ ըլլան , մէջերնէն մէկն իրենց  
ներկայացուցիչ կ'որոշեն :

307. 81°. Ընդհ. Ժողովոյ և Տն. Խորհրդոյ  
Գիւանները պարտաւոր են մասնաժողովոց  
արամագրութեան ներքեւ զննել անոնց վե-  
րաբերեալ թուղթերն ու տեղեկութիւն-  
ները :

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՎԵՐԱԳՆՆՈՒԹԻՒՆ

307. 82°. Սոյն կանոնագրութիւնն երկու  
տարիէն վերաքննելի է :



5000

ՀՀ Ազգային գրադարան



NL0935847



1

3113

